



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2015

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՁ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 63

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՈՎ ՏԵՐ

Ո՛վ Աստուած, իմ Աստուածս, քեզ կը փնտռեն անձկագին,  
հոգիս ծարաւ է քեզի, մարմինս քեզի կը փափաքի՝  
խոպան, ճաթռտած, անջուր մնացած հողի պէս:  
Ուստի սրբարանդ եկայ՝ քեզ տեսնելու,  
զօրութիւնդ եւ փառքդ դիտելու համար:  
Որովհետեւ քու սէրդ կեանքէն աւելի կ'արժէ.  
ուստի շրթներս պիտի գովաբանեն քեզ,  
ամբողջ կեանքիս ընթացքին պիտի օրհնաբանեն քեզ,  
եւ ձեռքերս աղօթքով դէպի քեզ բարձրացնեն:  
Հոգիս խնճոյքի մէջ պիտի ըլլայ ու կշտանայ,  
եւ շրթներս ցնծութեան երգերով պիտի օրհներգեն քեզ:  
Երբ կը պառկիմ՝ քեզ կը յիշեն,  
գիշերն ամբողջ՝ քու մասիդ կը մտածեն,  
որովհետեւ օգնական եղար ինձի.  
քու թելերուդ հովանիին տակ ցնծութեամբ կ'երգեն:  
Ես քեզի կապուած կը մնամ,  
եւ քու աջդ կը պահէ զիս:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐՁ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈՐՁ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՅ ԼԳ (33) ԳԼՈՒԽ



## ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՀՐԱՄԱՅԷ ԻՍՐԱՅԷԼԻՆ ԹՈՂՈՒՄԻ ՄԻՆԱ ԼԵՌԸ (33:1-6)

Եգիպտոսի գերութենէն մինչեւ այս հանգրուանը, Տէրը ինք կ'առաջնորդէր իր ժողովուրդը անալի ու կրակի սիւնով, բայց Իսրայէլի ժողովուրդին մեղանչումէն յետոյ, Աստուած կը պատուիրէ Մովսէսին որպէսզի ժողովուրդին հետ միասին ելեն երթալու համար դէպի խոստացուած երկիր, բայց Աստուած անոնց հետ պիտի չելլէ, որովհետեւ **«խաբապարանոց ժողովուրդ մըն ես, եւ այդ իսկ պատճառով չըլլայ թէ քեզ ճամբուն մէջ բնաջնջեմ»** (3 հմր):

Այս խօսքերը լսելէ ետք ժողովուրդը սուգ ըրաւ: Աստուած ալ կը պատուիրէ ըսելով. **«Ձեր վրայէն զարդերը վերցուցէք, որպէսզի ձեզի ընելիքս գիտնամ»** (5 հմր): Այս արտայայտութիւնը Աստուած դիպումնաւոր կերպով կ'ընէ, որպէսզի ժողովուրդին սրտին մէջ ցնցում յառաջանայ, անշուշտ իր դրական ազդեցութեամբ, անով անդրադառնալով ու դարձի գալու առ Աստուած: Եւ արդէն լսելով այդ արտայայտութիւնը ժողովուրդը սուգ կ'ընէ:

## ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԸ (33:7-11)

Մովսէս բանակէն հեռու կանգնեցուց զայն եւ անոր անունը **«Վկայութեան Խորան»** դրաւ: Մովսէս խորանը սրածին պէս ամալի սիւնը կ'իջնէր ու խորանի դուռը կը կայնէր եւ Տէրը Մովսէսին հետ կը խօսէր դէմ առ դէմ, ինչպէս մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի: Մովսէս նորէն բանակ կը դառնար, բայց անոր ծառան՝ Յետուն, խորանին մէջէն չէր հեռանար»: Այնքան գեղեցիկ է այս արտայայտութիւնը, անով ցոյց տալու Աստուծոյ եւ Մովսէսին միջեւ եղած մտերմութիւնը: Այդ մտերմութիւնը, սակայն, յարուկ չէր ու չէ միայն Մովսէսին, այլ բոլոր անոնց համար, որոնք Մովսէսի նման իրենց հաւաքարմութեամբ ու հնազանդութեամբ կ'ուզեն Աստուծոյ հետ ըլլալ: Անոր համար ալ Քրիստոս իր աշակերտներուն բարեկամներ կոչեց, «դուք ծառայ չէք, այլ բարեկամ»: Տակաւին, այս մտերմութեան մէջ կայ այն բաժինը ուր Աստուած Իր կամքը կը յայտնէ մարդու: Այնպէս ինչպէս որ էր պարագան Քրիստոսի աշխարհ գալուն, եւ անով ցոյց տալու Աստուծոյ կամքն ու ծրագիրը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ մարդու փրկութիւնը, եւ այդ փրկութեան ծածուկ խորհուրդներն են որ յայտնեց Քրիստոս Իր աշակերտներուն, անոր համար ալ ըսաւ. **«Ծառան չի գիտեր թէ Տէրը ինչ կ'ուզէ»** (Յովի 15:15):

## ՏԷՐԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ ԸԼԼԱԿ (33:12-23)

**«Եթէ քու ներկայութիւնդ մեզի հետ պիտի չերթայ, մեզ այս փեղէն մի՛ հաներ: Քանզի ինչո՞վ պիտի գիտցուի թէ ես ու քու ժողովուրդդ քու առջեւ շնորհք գրանք, եթէ ոչ՝ քու մեզի հետ երթալովդ: Այսպէս ես ու քու ժողովուրդդ երկրի երեսին վրայ եղած բոլոր ժողովուրդներէն պիտի զատուիք»** (15 հմր): Այս հարուածը զօրեղ կերպով ցոյց կու տայ, որ առանց Աստուծոյ առաջնորդութեան ժողովուրդը կը մոլորի: Մովսէս կը խոստանայ նաեւ որ երկրի բոլոր ժողովուրդներէն պիտի զատուին, որ կը նշանակէ իրենք զիրենք Աստուծոյ փրամադրելու, Անոր հնազանդութեան: Այնպէս ինչպէս պիտի ըսէր Քրիստոս. **«Ես ձեզ այս աշխարհէն զարեցի, դուք այլեւս այս աշխարհին չէք պատկանիր»** (Յովի 17:16):

**«Մովսէս ըսաւ. "Կ'աղաչեմ, քու փառքդ ցուցուր ինձի": Տէրը ըսաւ. "Իմ բոլոր բարութիւնս քու առջեւէդ պիտի անցնեմ ու Տիրոջ անունը քու առջեւ պիտի կանչեմ եւ որո՞ւ որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ ու որո՞ւ որ պիտի գթամ՝ կը գթամ": Բայց դուն իմ երեսս չես կրնար փեռնել. որովհետեւ մարդ չի կրնար զիս փեռնել ու ապրիլ»:** Այսպէս Մովսէս կը փափաքի Աստուծոյ փառքը փեռնել: Փառք ըսելով կը հասկնայ Աստուծոյ ինքնութիւնը: Որովհետեւ Մովսէս փեռած էր Աստուծոյ հրաշալի գործերը, բայց կ'ուզէր աւելի մօտ գգալ Աստուծոյ, մանաւանդ գիտէր, որ այդ գործերը պարզապէս Աստուծոյ փառքին արտայայտութիւնն են, Անոր փառքը չեն, ուրեմն կ'ուզէ Աստուծոյ բուն փառքը փեռնել, այսինքն՝ Աստուծոյ էութիւնը: Պարասխանը կ'ըլլայ, «ոչ որ կրնայ իմ երեսս փեռնել»: Ուրեմն, Աստուած կը ճանչցուի միայն Իր երին թողած գործերէն: Մենք զԱստուած կը ճանչնանք Իր ստորոգելիներով, որ փրուած են Իր իսկ կողմէ: